ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«25» ապրիլի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-34/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով Արմեն Հայրապետյանի 07.04.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **Արմեն Հայրապետյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 07.04.2016թ. ներկայացրած բողոքով Արմեն Հայրապետյանը (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) հայտնել է, որ ՀՀ Վայոց Ձորի մարզի

Վայքի քաղաքապետարանի կողմից ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի քաղաքային այգու բարեկարգման և Վայք համայնքի «Արևիկ» մարզադաշտի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մավշին» ՍՊԸ-ն կոնսորցիումով «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի հետ:

«Մավշին» ՍՊԸ-ն 15.01.2016թ. Կենտրոն ներկայացրած բողոքով հաստատել է, որ ընդունել է, որ իր ներկայացրած հայտը սխալներով է լրացված եղել, թերի է և չի համապատասխանել Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, որը հաստատվել է նաև ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 02/16 որոշմամբ, իսկ 29.01.2016թ. Կենտրոն ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.12.2015թ. թիվ 2 արձանագրությունը թերի է, քանի որ կոնկրետ չեն նշվել մերժման հիմքերը, ինչը հաստատվել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 06/16 որոշմամբ:

Բողոքաբերը հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.02.2016թ. տեղի ունեցած նիստի N 5 արձանագրությամբ ընտրված մասնակից է ճանաչվել «Մավշին» ՍՊԸ-ն, առանց միաժամանակյա բանակցություններ անցկացնելու բավարար գնահատված մասնակիցների միջև և որոշում է կայացվել վերջինիս հետ կնքել պայմանագիր:

Ըստ Արմեն Հայրապետյանի, Պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 74-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունը և այլն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի վերը նշված արձանագրությունը և որոշումը կայացվել է օրենքի խախտումներով, ինչը չի բխում ՀՀ գործող օրենսդրության պահանջներից: Այսպիսով, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քայլերը և գործողությունները ոչ օբյեկտիվ են, հանձնաժողովը ճիշտ չի գնահատել «Մավշին» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը, ավելին՝ հանձնաժողովը հակասում է իրեն, քանի որ 30.12.2015թ. թիվ 2 արձանագրությամբ արդեն իսկ «Մավշին» ՍՊԸ-ի հայտը

գնահատել է հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժել է, իսկ 16.02.2016թ. թիվ 5 արձանագրությամբ նույն հայտը գնահատվել է բավարար:

Բողոքաբերը նշել է, որ «Մավշին» ՍՊԸ-ի 15.01.2016թ. Կենտրոնին ներկայացրած բողոքը Խորհրդի թիվ 02/16 որոշմամբ մերժվել է հետևյալ հիմնավորմամբ՝

Վայքի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«...Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 30.12.2015թ. ժամը 10:30-ին, որի ընթացքում բացվել և գնահատվել են թվով չորս մասնակիցների կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտերը:

1.հայտեր ներկայացրած բոլոր չորս մասնակիցների ներկայացրած ծրարները ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան,

2. բոլոր չորս մասնակիցների ներկայացրած ծրարներում առկա չեն եղել հրավերով պահանջված փաստաթղթերը և փաստաթղթերը կազմված չեն եղել հրավերի պահանջներին համապատասխան:

Մասնավորապես, «Մավշին» ՍՊԸ-ն «Մասնագիտական փորձառություն» և «Տեխնիկական միջոցներ» չափանիշների գծով չի համապատասխանում հրավերի պահանջներին: Պատվիրատուն նշել է, որ Ընթացակարգը կազմակերպելիս՝ հաշվի են առնվել Կարգի 45-րդ և 46-րդ կետերը՝ հաշվի առնելով նույն որոշման 10-րդ գլխի առանձնահատկությունները (մեկ աշխատանքային օր չի տրամադրվում թերությունները շտկելու համար): Վայքի քաղաքապետարանը հայտնել է նաև, որ «Մավշին» ՍՊԸ-ն ներկայացրել է համատեղ գործունեության պայմանագիր, որտեղ հստակ նշված չեն գործընկերների կողմից կատարվող ներդրումները, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագրերը) չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին»...:

Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

«...ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Կենտրոնին ուղղված 05.10.2015թ. թիվ 1/73-1/28943-15 գրությամբ ներկայացված պարզաբանման համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարի 14.04.2015թ. թիվ 222-Ա հրամանով լրացում է կատարվել ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հրամանում և հաստատվել են Կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «բ», «գ», «դ» պարբերությունների հիման վրա՝ առանց գնումների

հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով իրականացվող գնման գործընթացների հրավերների օրինակելի ձևերը: Օրինակելի ձևերի համաձայն՝ հայտերի բացումից հետո մասնակցին չի կարող ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթուղթ ներկայացնելու առաջարկ: Ավելին, օրինակելի ձևերով սահմանված է, որ հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը մասնակիցը ներկայացնում է հայտով՝ ի սկզբանե:

Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության վերոհիշյալ գրության՝ եթե գնումն իրականացվում է Կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «բ», «գ» և «դ» պարբերությունների հիման վրա, ապա Կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության, ինչպես նաև վկայակոչված հրավերների օրինակելի ձևերի համաձայն՝ մասնակցին չի կարող ներկայացվել անհամապատասխանությունը շտկելու առաջարկ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ Ընկերության բողոքով ներկայացրած՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.12.2015թ. ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրությամբ կայացված որոշումը վերանայելու պահանջը ենթակա է մերժման, քանի որ...) www.gnumner.am կայքում հրապարակված տեղեկատվություն»:

Բողոքաբերի մոտ հարց է առաջացել, թե ինչպես «Մավշին» ՍՊԸ-ի կողմից ընդունված, Ընթացակարգի գնահատման հանձնաժողովի կողմից արձանագրված և ապացուցված, ինչպես նաև ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից հետազոտված և ապացուցված՝ հրավերի պահանջներին չհամապատասխանող «Մավշին» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացրած թերի հայտը երկրորդ անգամ կարող է գնահատվել բավարար:

Ելնելով վերոգրյալից, պարզ է դառնում, որ Պատվիրատուի՝ Վայքի քաղաքապետարանի և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կատարվել են ապօրինի գործողություններ և կայացվել են ապօրինի որոշումներ, որն օրենքի կոպիտ խախտում է:

Արմեն Հայրապետյանը նշել է, որ «Մավշին» ՍՊԸ-ն երկրորդ անգամ 29.01.2016թ. ներկայացրել է բողոք, որով փաստել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ճիշտ չի կազմել և լրացրել 30.12.2015թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությունը, այն է՝ կոնկրետ չի նշվել «Մավշին» ՍՊԸ-ի հայտի մերժման հիմքերը: Սույն բողոքով նաև

պնդել է այն հանգամանքը, որ նմանատիպ բողոքի վերաբերյալ արդեն իսկ կա նմանատիպ կայացրած որոշում և խնդրել է նույն պատճառաբանությամբ և հիմքով «Մավշին» ՍՊԸ-ի բողոքը բավարարել, որը նույնպես օրենքի խախտում է, քանի որ համաձայն՝ «...Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով բողոք: Նույն հոդվածի համաձայն բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից»:

Բողոքաբերը հայտնել է, որ ԳԲԽ-06/16 որոշման համաձայն՝ Խորհուրդը քննել և կայացրել է մի այնպիսի որոշում (մեջբերում. «...դադարեցնել ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 30-ին ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությունը և Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները), որն արդեն իսկ դադարեցվել էր 20.01.2016թ. ԳԲԽ 01/16 որոշմամբ:

Բողոքաբերը բողոքով հայտնել է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները եղել են ոչ իրավաչափ:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.02.2016թ. թիվ 5 արձանագրության, Ընթացակարգին մասնակցել են երկու մասնակից, որոնց կողմից ներկայացված հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան, սակայն հանձնաժողովն, առանց առաջարկված գները նվազեցնելու բանակցություններ իրականացնելու, որոշել է ընտրված մասնակցին, արդյունքում կրկին խախտվել է Կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունը, համաձայն որի՝ հայտերի բացումը, գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է հայտերի բացման նիստում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն հայտերը, որոնք գնահատվել են հրավերի պահանջներին անբավարար, մերժվում են, իսկ հրավերի պահանջները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած՝ նիստի ներկա մասնակիցների ներկայացուցիչների հետ կազմակերպվում են ներկայացված գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ և բանակցությունների ավարտին նվազագույն գին

ներկայացրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, որի հետ մեկ աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով կնքվում է պայմանագիր: Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում, պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին:

Ուսումնասիրելով www.gnumner.am կայքում հրապարակված «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով Ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվությունը, Բողոքաբերը գտել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները ոչ օբյեկտիվ են, հանձնաժողովի գործողությունների արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված մրցակցության, հավասարության սկզբունքները:

Արմեն Հայրապետյանը հայտնել է, որ Խորհրդի կողմից որոշում կայացնելու համար պետք է ուսումնասիրել Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Մավշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը, որը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքաբերը խնդրել է «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգն ապօրինի հայտարարելու, Վայքի քաղաքապետարանի կողմից կնքված պայմանագիրը և Ընթացակարգի գնահատման հանձնաժողովի կողմից կայացրած որոշումներն ապօրինի հայտարարելու, կնքված պայմանագիրն անօրինական և չեղյալ համարելու, «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը չկայացած հայտարարելու, ինչպես նաև պայմանագիր կնքված լինելու դեպքում աշխատանքների ընթացքը և վճարումները կասեցնելու և դադարեցնելու, պայմանագրի կատարումը մինչև սույն բողոքի քննումը կասեցնելու մասին:

2. <u>Վայքի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

Վայքի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 19.04.2016թ. թիվ 54 գրությամբ Արմեն Հայրապետյանի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանի կողմից Վայք համայնքի

քաղաքային այգու բարեկարգման և Վայք համայնքի «Արևիկ» մարզադաշտի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 28.12.2015թ. կազմակերպված «ՎՔ-ԲԲԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.02.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստով կատարվել է Ընթացակարգի մասնակիցներ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի (կոնսորցիումով՝ «Էկոլակտ» ՍՊԸ-ի հետ) և «Մավշին» ՍՊԸ-ի (կոնսորցիումով՝ «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի հետ) հայտերի վերագնահատում, որի արդյունքում գնահատող հանձնաժողովը բավարար է գնահատել «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի և «Մավշին» ՍՊԸ-ի ներկայացրած հայտերը:

Վայքի քաղաքապետարանը հայտնել է նաև, որ մասնակիցները ներկա չեն գտնվել նիստին, իսկ Կարգի 74-րդ կետի համաձայն՝ բանակցություններ վարվում են նիստին ներկա մասնակիցների հետ: Հաշվի առնելով, որ մասնակիցները ներկա չեն գտնվել նիստին, բանակցություններ վարել հնարավոր չէր:

Պատվիրատուն նշել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի երկու չափաբաժինների համար մասնակիցների ներկայացրած գնային առաջարկներից ավելի ցածր գին է առաջարկել «Մավշին» ՍՊԸ-ն, գնահատող հանձնաժողովը վերջինիս ճանաչել է որպես ընտրված մասնակից:

Ինչ վերաբերում է Խորհրդի 27.01.2016թ. թիվ 02/16 որոշմանը, ապա նշված որոշմամբ մերժվել է «Մավշին» ՍՊԸ-ի հայտը վերանայելու և իրեն հաղթող ճանաչելու պահանջը, քանի որ Խորհուրդը նման լիազորություն չի ունեցել: Խորհրդի 10.02.2016թ. թիվ 06/16 որոշմամբ բավարարվել էր «Մավշին» ՍՊԸ-ի պահանջը՝ գնահատող հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 30-ի թիվ 2 արձանագրությամբ «Մավշին» ՍՊԸ-ի հայտում ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթեր չլինելու, հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան ճանաչելու և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները դադարեցնելու վերաբերյալ: Խորհրդի թիվ 06/16 որոշման հիման վրա իրականացվել է «Մավշին» ՍՊԸ-ի հայտի վերագնահատում և վերջինիս հայտը ճանաչվել է բավարար:

3. <u>ԳԲԽ-34/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-34/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանի կողմից հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ:

2. Ընթացակարգի 1-ին (Վայք համայնքի քաղաքային այգու բարեկարգման աշխատանքներ) և 2-րդ (Վայք համայնքի «Արևիկ» մարզադաշտի հիմնանորոգման աշխատանքներ) չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Մավշին»ՍՊԸ-ն («Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի հետ համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) և «Նոր-Էներջի» ՍՊԸ-ն («Էկոլակտ» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

3. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 08.01.2016թ. ներկայացրած բողոքով «Նոր-Էներջի» ՍՊԸ-ն խնդրել է չեղյալ համարել, անվավեր ճանաչել կամ դադարեցնել ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 30-ին ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ՝ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի հայտն Ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթեր առկա չլինելու, հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան ճանաչելու և Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները:

4. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 20.01.2016թ. թիվ 01/16 որոշմամբ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 08.01.2016թ. ներկայացրած բողոքը բավարարվել է:

5. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 15.01.2016թ. ներկայացրած բողոքով «Մավշին» ՍՊԸ-ն խնդրել է վերանայել «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը և հաղթող ճանաչել «Մավշին» ՍՊԸ-ին:

6. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 27.01.2016թ. թիվ 02/16 որոշմամբ «Մավշին» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) 15.01.2016թ. ներկայացրած բողոքը մերժվել է:

7. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 29.01.2016թ. ներկայացրած բողոքով «Մավշին» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք քաղաքապետարանի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 30-ին ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ՝ «Մավշին» ՍՊԸ-ի «Մասնագիտական փորձառություն» և «Տեխնիկական միջոցներ» չափանիշները հրավերի պահանջներին չբավարարելու, «Մավշին» ՍՊԸ-ի հայտն Ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթեր առկա չլինելու, հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան ճանաչելու և «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները:

8. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 10.02.2016թ. թիվ 06/16 որոշմամբ «Մավշին» ՍՊԸ-ի 29.01.2016թ. ներկայացրած բողոքը բավարարվել է:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.02.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրությամբ որոշվել է, հիմք ընդունելով Խորհրդի կողմից կայացված վերը նշված որոշումներն, իրականացնել նշված կազմակերպությունների կողմից ներկայացրած հայտերի գնահատում:

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գնային առաջարկների գնահատման արդյունքում, վերը նշված արձանագրության 3-րդ կետով որոշել է, հիմք ընդունելով, որ «Մավշին» ՍՊԸ-ն ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ, որպես ընտրված մասնակից ճանաչել «Մավշին» ՍՊԸ-ին:

4. <u>ԳԲԽ-34/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով Արմեն Հայրապետյանի 07.04.2016թ. ներկայացրած բողոքը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, Վայքի քաղաքապետարանի 19.04.2016թ. թիվ 54 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ եթե գնումն իրականացվում է սույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հայտերի բացումը, գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է հայտերի բացման նիստում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն հայտերը, որոնք գնահատվել են հրավերի պահանջներին անբավարար, մերժվում են, իսկ հրավերի պահանջները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած՝ ***նիստի ներկա մասնակիցների ներկայացուցիչների հետ*** կազմակերպվում են ներկայացված գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ և բանակցությունների ավարտին նվազագույն գին ներկայացրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, որի հետ մեկ աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով կնքվում է պայմանագիր: Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում, պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին:

Բողոքաբերի կողմից վկայակոչված ԳԲԽ-02/16 և ԳԲԽ-06/16 բողոքը քննող հանձնաժողովների կողմից համապատասխանաբար 27.01.2016թ. և 10.02.2016թ. ընդունված որոշումների կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

•ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին ուղղված 05.10.2015թ. թիվ 1/73-1/28943-15 գրությամբ ներկայացված պարզաբանմամբ հայտնել է, որ ՀՀ ֆինանսների

նախարարի 14.04.2015թ. թիվ 222-Ա հրամանով լրացում է կատարվել ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հրամանում և հաստատվել են Կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «բ», «գ», «դ» պարբերությունների հիման վրա՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով իրականացվող գնման գործընթացների հրավերների օրինակելի ձևերը: Օրինակելի ձևերի համաձայն՝ հայտերի բացումից հետո մասնակցին չի կարող ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթուղթ ներկայացնելու առաջարկ:

Ավելին, օրինակելի ձևերով սահմանված է, որ հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը մասնակիցը ներկայացնում է հայտով՝ ի սկզբանե:

ՀՀ ֆինանսների նախարարությունը վերոհիշյալ գրությամբ նշել է նաև, որ եթե գնումն իրականացվում է սույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «բ», «գ» և «դ» պարբերությունների հիման վրա, ապա Կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության, ինչպես նաև վկայակոչված հրավերների օրինակելի ձևերի համաձայն՝ ***մասնակցին չի կարող ներկայացվել անհամապատասխանությունը շտկելու առաջարկ:***

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ բողոքին վերաբերող գնման գործընթացը իրականացվել է առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու գնման ընթացակարգով, Խորհուրդը 27.01.2016թ. թիվ 02/16 որոշմամբ արձանագրել է, որ տվյալ դեպքում կիրառելի չէ կարգի 45-րդ կետը՝ չքննարկելով նշված անհամապա-տասխանությունների առկայության կամ բացակայության հարցը:

• Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ ***հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:***

Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

ԳԲԽ-06/16 բողոքը քննող հանձնաժողովը, հիմք ընդունելով Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, ***գտել է,*** որ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին

համապատասխան ***հայտի մերժման դեպքում*** պետք է պարունակեր ***հայտի մերժման հիմնավորումը***, իսկ Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետը սահմանում է, որ հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների հիմնավորվածության համար, որոշել է դադարեցնել ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 30-ին ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ՝ «Մավշին» ՍՊԸ-ի հայտն Ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթեր առկա չլինելու, հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան ճանաչելու և Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները:

Այսպիսով, ԳԲԽ-02/16 և ԳԲԽ-06/16 բողոքը քննող հանձնաժողովների կողմից ընդունված որոշումների վերլուծությունից երևում է, որ Խորհուրդը իր վկայակոչված որոշումներով չի գնահատել «Մավշին» ՍՊԸ-ի հայտը՝ հրավերի պահանջներին համապատասխանության տեսանկյունից, ավելին, չի ճանաչել այն հրավերի պահանջներին չհամապատասխանող, ինչը սխալմամբ նշել է բողոքաբերը 07.04.2016թ. ներկայացրած իր բողոքով:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի այն դիրքորոշմանը, որ համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.02.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության՝ Ընթացակարգին մասնակցել են երկու մասնակից, որոնց կողմից ներկայացված հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան, սակայն գնահատող հանձնաժողովը որոշել է ընտրված մասնակցին, առանց առաջարկված գները նվազեցնելու շուրջ բանակցություններ իրականացնելու, ապա այս կապակցությամբ հայտնում ենք, որ ըստ Վայքի քաղաքապետարանի 19.04.2016թ. թիվ 54 գրության՝ մասնակիցները ներկա չեն գտնվել հայտերի բացման նիստին, իսկ Կարգի 74-րդ կետի համաձայն՝ բանակցություններ վարվում են նիստին ներկա մասնակիցների հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ կազմակերպվում են հրավերի պահանջները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած ***նիստի ներկա մասնակիցների ներկայացուցիչների հետ, իսկ տվյալ դեպքում*** մասնակիցները ներկա չեն գտնվել նիստին, հետևաբար հնարավոր չի եղել բանակցություններ վարելու, ուստի գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից չի

խախտվել Կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը ապօրինի հայտարարելու, Վայքի քաղաքապետարանի կողմից կնքված պայմանագիրը և մրցույթի գնահատման հանձնաժողովի կողմից կայացրած որոշումները ապօրինի հայտարարելու, կնքված պայմանագիրը անօրինական և չեղյալ համարելու, Ընթացակարգը չկայացած հայտարարելու, ինչպես նաև պայմանագիր կնքված լինելու դեպքում աշխատանքների ընթացքը և վճարումները կասեցնելու և դադարեցնելու, պայմանագրի կատարումը մինչև սույն բողոքի քննումը կասեցնելու պահանջների վերաբերյալ Արմեն Հայրապետյանի կողմից Կենտրոնին 07.04.2016թ. ներկայացված բողոքն անհիմն է և առաջարկում ենք այն մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-34/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան